սարակ ամէն մի Արարատ սարը բարձրանալու փորձի հանդէպ:

«Առաջին փորձը, որ ձեռնարկուել էր առանց Աբովեանի, մատնուել էր անյաջողութեան: Պարրոտ մեծ մասով Աբովեանի ջանքերին եւ շրջահայեցողութեանն է պարտական, որ երկրորդ փորձին կարողացել է 15,138 փարոտք բարձրութեան հասնել եւ վերջապէս երրորդ անգամին էլ (սեպտեմբերի 26–28–ին) իսկապէս որ հասել է Արարատի կատարը, ուր մինչ այն, ջրհեղեղից ասղին, մարդկային ոտք կոխած չէ եղել:

«Գերման գիտնականը կենդանի հետաքրքրութիւն է ցոյց տալիս հանդէպ այդ երիտասարդ հայի եւ հայրենիք վերադառնալուց յետոյ նրան տանել է տալիս Դորպատ: Այնտեղ նա Աբովեանին հօր նման խնամում է եւ վեց տարի շարունակ ուսման տալիս իր հաշուին7):

«Այդ վեց տարիները կազմում են Աբովեանի կեանքի բախտաւոր շրջանը: Նա իր աչքերի առջեւ բացուած է տեսնում մի նոր աշխարհ: Այդտեղ նա մի այնպիսի եռանդով ու թարմ պատրաստակամութեամբ իւրացնում է ամէն ինչ, որ շուտով ինքզինքը բոլորովին հարազատ է զգում իր գերման շրջապատի մէջ: Այն փաստը, որ նա այդ ժամանակի ընթացքում ձեռք է բերում լեզուների մեծ ծանօթութիւն, ինքնին լաւ ապացոյց է նրա մտաւոր ընդունակութեանց, ինչպէս նաեւ այն իրողութիւնը, որ նա հանդէպ իր ուսուցիչների ցուցահանում էր շնորհակալութիւն ու անձնուիրութիւն, պատիւ էր բերում նրա ազնիւ սրտին: Աբովեանի երախտագիտութիւնը տարածւում էր ամէնի եւ բոլորի վրայ, որ գերման անունն էր կրում: Եւ հայրենիք վերադառնալուց յետոյ նա ոչ միայն չէր փախցնում եւ ոչ մի առիթ՝ օգտակար լինելու Կովկաս ու Հայաստան այցելող ամէն մի գերման ճամբորդի, այլ եւ իր կեանքի նպատակն էր սեպում՝ գերման մշակոյթը եւ լեզուն տարածել վրացիների եւ հայերի մէջ»8):

«Այն միջոցին, երբ նա ծանօթացաւ նրա հետ, 1844 թ., նա հարիւրից աւելի ասիացի երիտասարդ մարդկանց այնտեղ էր բերել հաստատել, որ նրանք ի վիճակի էին բերանացի ու գրաւոր, այն էլ սահուն կերպով, արտայայտուել գերմաներէն լեզուով: Դորպատից վերադառնալուց յետոյ նա մի շարք տարիներ անցկացրեց Թիֆլիսում, որտեղ եւ բացառապէս զբաղուած էր իր երիտասարդ հայրենակիցներին ուսում տալով: Եւ որովհետեւ նա չափէն աւելի դերծ էր եսականութիւնից ու չափէն աւելի անգործնական նկարագրի տէր՝ անհրաժեշտ չափով իր անձի վերաբերմամբ եւս կիրառել տալու համար հին սկզբունքը, թէ՝ աշխատաւորը արժանի է իր վարձքին, ուստի եւ շուտով մատնուեց նիւթական դժուարութեանց, որոնք եւ դարձան նրա անվերջ վշտերի աղբիւրը: Միրզա Շաֆիի մի անգամ այսպէս յայտնող կերպով արտայայտուեց նրա մասին. թէ՝ «Աբովեան ավալինջը էրմենին տըր, քի էրմենին եօխ տըր»: Մի խօսք, որ կրկնակ նշանակութիւն ունի. մէկ որ՝ Աբովեանը առաջին հայն է, որ բնաւ հայ չէ (այսինքն՝ ագահ ու կաշառակեր մարդ չէ). մէկ էլ որ՝ Աբովեանը առաջին հայն է, որովհետեւ նա հայ չէ (բառի ամենավատ իմաստով):

«Դորպատի իր բարեկամների միջնորդութեան շնորհիւ Աբովեան, որ այդ միջոցին ամուսնացել էր մի գերմանուհու հետ, ստացաւ Երեւանի դաւառական դպրոցի տեսչի պաշտօնը, եւ սակայն մի այնպիսի խղճուկ ռոճկով, որ դրանով հազիւ կարող էր քարշ տալ իր կեանքը:

«Եւ արդէն շատ անգամներ առիթ եմ ունեցել ասելու, թէ Ռուսաստանում ռոճիկները

---

7) Ցաւոտի է սակայն, որ Աբովեան ոչ թէ Պարրոտի սեփական միջոցներով է ուսել, այլ որ՝ Պարրոտ նրա համար կառավարական թոշակ է ապահովել լուսաւորութեան նախարարութիւնից:

8) Բոդենշտէդտ այստեղ, ինչպէս նաեւ մի քանի ուրիշ առիթներով, չափազանցնում է ասելով, որպէս թէ Ա–ի «կեանքի նպատակն» է եղել գերման լեզուն եւ մշակոյթը տարածել հայոց մէջ: Նրա կեանքի նպատակը եղել է՝ վերածնութեան ճամբու վրայ դնել իր հարազատ՝ հայ ժողովուրդը, հարկաւ եւրոպական ու նախ եւ առաջ գերման մշակոյթի լուսոյ տակ: